ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 4 , հեռ.՝ (+374 60) 830 – 840, (+374 60) 830 850
Էլ-փոստ՝ info@competition.am, վեբ կայք՝ http://www.competition.am

«11» 09 2024թ.
No 04/0513

**«ԼՈՒՍ. Մ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ
ՏԻԿԻՆ ԼՈՒՍԻՆԵ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ**
**(հասցե՝ ք. Երևան, Վ. Համբարձումյան, 8/1,
պատճենը՝ ք. Երևան, Արմենակյան 83)**

Հարգելի՛ տիկին Մուրադյան,

Կից ուղարկվում է Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի (այսուհետ՝ **Հանձնաժողով**) 2024 թվականի սեպտեմբերի 10-ի ««ԼՈՒՍ. Մ.» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության վերաբերյալ թիվ ՀԳ-02510/24 վարույթի ժամկետը երկարաձգելու մասին» թիվ 546-Ա որոշման պատճենը:

Տեղեկացնում ենք, որ Հանձնաժողովին փաստաթղթեր ներկայացնել և ստանալ, ինչպես նաև Հանձնաժողովի հետ հետագա ողջ հաղորդակցությունը կարող եք իրականացնել նաև առցանց՝ Հանձնաժողովի e-Compete էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ **Համակարգ**) միջոցով, որի համար անհրաժեշտ է գրանցվել Համակարգում՝ մուտք գործելով Հանձնաժողովի պաշտոնական կայքի (www.competition.am) «Իմ էջը» բաժին, ընտրելով «Գրանցվել» հրամանը և լրացնելով անձի նույնականացման համար պահանջվող տվյալները:

Առդիր՝ «2» թերթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԱՇՈՏ ՎԱՀԱՆՅԱՆ

*Կատարող՝ Մերի Առաքելյան
Անբարեխիղճ մրցակցության վերահսկողության վարչություն
Հեռ. (+374 60) 830-840 (266)*

www.competition.am կայքում հրապարակման օրը՝ 22 հոկտեմբերի 2024 թվական:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 սեպտեմբերի 2024 թվականի թիվ 546-Ա

«ԼՈՒՍ. Մ.» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ ՀԳ-02510/24 ՎԱՐՈՒՅԹԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) 2024 թվականի սեպտեմբերի 10-ի նիստում, քննարկելով «ԼՈՒՍ. Մ.» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ **Ընկերություն**) վերաբերյալ թիվ ՀԳ-02510/24 վարույթի ժամկետը երկարաձգելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Հանձնաժողովը 2024 թվականի հունիսի 11-ի ««ԼՈՒՍ. Մ.» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին» թիվ 280-Ա որոշմամբ (այսուհետ նաև՝ **թիվ 280-Ա որոշում**) հարուցել է թիվ ՀԳ-02510/24 վարույթը (այսուհետ նաև՝ **Վարույթ**):

Վարույթը հարուցված է «մանկապարտեզ» բառի օգտագործմամբ գործունեություն իրականացնելու առնչությամբ Ընկերության վարքագծում անբարեխիղճ մրցակցության, այդ թվում՝ հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշների առերևույթ առկայության հիմքով:

Թիվ 280-Ա որոշումը ուղարկվել է Ընկերության իրավաբանական՝ ք. Երևան, Վ. Համբարձումյան 8/1 հասցեով, սակայն Ընկերությունը չի ստացել, և այն վերադարձվել է «Անհայտ» նշումով:

Հանձնաժողովը թիվ 280-Ա որոշումը 2024 թվականի հուլիսի 1-ին հրապարակել է «www.azdarar.am» ու «competition.am» կայքերում և 2024 թվականի հուլիսի 4-ից այն համարվել է Ընկերությանը պատշաճ հանձնված:

Բացի այդ, թիվ 280-Ա որոշումը ուղարկվել է Արարատի մարզ, Վեդի, Թումանյան 3, 10 հասցեով, սակայն Ընկերությունը չի ստացել, և այն վերադարձվել է «Տեղափոխված» նշումով:

Հանձնաժողովի գլխավոր քարտուղարի 2024 թվականի օգոստոսի 26-ի թիվ 9804 գրությամբ (այսուհետ նաև՝ **թիվ 9804 գրություն**) Ընկերությանն է ուղարկվել Հանձնաժողովի անբարեխիղճ մրցակցության վերահսկողության վարչության (այսուհետ նաև՝ **Պատասխանատու ստորաբաժանում)** կողմից կազմված ««ԼՈՒՍ. Մ.» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության վերաբերյալ թիվ ՀԳ-02510/24 վարույթում առկա փաստական հանգամանքների մասին» տեղեկանքը (այսուհետ նաև՝ **Տեղեկանք**), և Ընկերությանն առաջարկվել է Տեղեկանքի առնչությամբ ներկայացնել գրավոր դիրքորոշում, որը սույն որոշման ընդունման պահի դրությամբ Հանձնաժողովում չի ստացվել:

Հաշվի առնելով, որ Վարույթի ժամկետը լրանում է 2024 թվականի սեպտեմբերի 11-ին, իսկ Վարույթի շրջանակում առկա փաստական հանգամանքները, առկայության դեպքում Վարույթով պատասխանողի դիրքորոշումների հաշվառմամբ վերլուծելու, անհրաժեշտության դեպքում հավելյալ տեղեկատվություն ձեռքբերելու, ինչպես նաև Վարույթի շրջանակում գործի բազմակողմանի և լրիվ քննությանն ուղղված այլ գործողություններ կատարելու համար Վարույթի իրականացման՝ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքով (այսուհետ նաև՝ **Օրենք**) սահմանված եռամսյա ժամկետը բավարար չէ՝ Պատասխանատու ստորաբաժանումը 2024 թվականի սեպտեմբերի 5-ի թիվ ՄՊՀ-010287 զեկուցագրով, ի թիվս այլնի, առաջարկել է Վարույթի ժամկետը 2024 թվականի սեպտեմբերի 11-ից եռամսյա ժամկետով երկարաձգել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը գտնում է, որ Վարույթի ժամկետն անհրաժեշտ է եռամսյա ժամկետով երկարաձգել:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 63-րդ հոդվածի 1-ին, 6-րդ մասերով, 42-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. 2024 թվականի սեպտեմբերի 11-ից եռամսյա ժամկետով երկարաձգել «ԼՈՒՍ. Մ.» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության վերաբերյալ թիվ ՀԳ-02510/24 վարույթի ժամկետը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՆԱԽԱԳԱՀ **Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2024 թ. սեպտեմբերի 10
Երևան